Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածում.

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում» բառերը փոխարինել «մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում» բառերով:

2) 2.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարան) պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված ակտերի դեմ բողոքների քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետ՝

«գ) սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասը «իրավասության» բառից հետո լրացնել «քաղաքացիական» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1. Դատարանը կարող է ապացույց պահանջելու մասին միջնորդությունը բավարարել առանց ապացույց պահանջելու մասին առանձին ակտի ձևով որոշման կայացման, եթե դատարանը պահանջվող տեղեկատվությունը կարող է ստանալ սույն օրենսգրքի 64.1-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդկությամբ նոր 64.1-րդ հոդվածով.

«**Հոդված 64.1. Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկություններ ձեռք բերելը**

1. Դատարանը միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով կարող է գործի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել այլ մարմիններից և անձանցից:

2. Դատարանին անհրաժեշտ տեղեկատվությունն էլեկտրոնային տեղեկատվական համակարգում ինքնաշխատ գեներացվում է հարցմամբ ներկայացված տեղեկությունների հիման վրա: Հարցման պատասխանն ինքնաշխատ պատրաստվում է էլեկտրոնային փաստաթղթի ձևով, որը հավաստվում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգի կողմից:

Էլեկտրոնային տեղեկատվական համակարգից հարցման պատասխանի արտատպված օրինակը հավասարեցվում է տեղեկությունը տնօրինող համապատասխան մարմնից դիմումի կամ որոշման հիման վրա ստացված պատասխանին:»:

Հոդված 6. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասում «15-րդ օրն» բառերը փոխարինել «յոթերորդ օրն» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող և փաստաբան-ներկայացուցիչ չունեցող ֆիզիկական անձի, ինչպես նաև ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում գտնվող կամ բուժական հիմնարկում ստացիոնար բուժում ստացող գործին մասնակցող անձանց նկատմամբ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասում «15-րդ օրը» բառերը փոխարինել «յոթերորդ օրը» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 121-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) հայցվորի կամ հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «յոթնօրյա ժամկետում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի,» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով՝

«2. Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասին համապատասխան դատավորի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն հայցադիմումում առկա թերությունների մասին՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:»:

Հոդված 11. Օրենսգրքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում կամ նոտարի կողմից արձակած վճարման կարգադրություն, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը կամ նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելը մերժելու դեպքի.».

2) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 12. Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-1.4-րդ մասերով.

«1.1. Այն դեպքերում, երբ չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները՝ այդ թվում հայցադիմումին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը կամ հայցադիմումը ստորագրված չէ՝ դատավորի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել հայցվորին հայցադիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում դատավորի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել հայցադիմումում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերությունները արձանագրությունը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ քան կազմման հաջորդ օրը ուղարկվում է հայցվորին:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր, որոնք թերությունների մատնանշման պահին չէին բացահայտվել դատավորի աշխատակազմի կողմից:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, եթե առկա են հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:

1.4. Սույն հոդվածի 1.1-րդ մասի կարգավորումը կիրառելի է այն դեպքերում, երբ առկա չեն սույն հոդվածի 1.1-րդ մասում չնշված հիմքերով հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:»:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Այն դեպքերում, երբ հայցադիմում առկա թերությունների վերացման համար հայցվորը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում՝ առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ այն հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով հայցվորին:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.

«2.1. Առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկում է հայցվորին: Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 13. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի կամքից անկախ, օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում վճռի հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել վճռի հրապարակման ժամանակը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:»:

Հոդված 14. Օրենսգրքի 297-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին մասում «երկուհազարապատիկը» բառերը փոխարինել «հինգհազարապատիկը» բառերով:

2) 3-րդ մասի 3-րդ կետում «երկուհազարապատիկը» բառը փոխարինել «հինգահազարապատիկը» բառով:

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան.»:

Հոդված 15. Օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ: Սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատարանը պարզեցված վարույթ կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ, իսկ 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ հայցադիմումի պատասխանն ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում՝ առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ:»:

Հոդված 16. Օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Առաջին ատյանի դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում եզրափակիչ դատական ակտը կայացնում և հրապարակում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից չորս ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով պարզեցված վարույթ կիրառելու դեպքերի, որի պարագայում եզրափակիչ դատական ակտը կայացվում և հրապարակվում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:»:

Հոդված 17. Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ներկայացվել է ամուսնալուծության և (կամ) ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8) հայցն ակնհայտ անհիմն է:»:

Հոդված 18. Օրենսգրքի 305-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «15-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «մեկամսյա ժամկետում» բառերով.

2) հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արագացված դատաքննության կիրառմամբ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու օրվանից 15-օրյա ժամկետում, եթե դրա դեմ նույն ժամկետում վերաքննիչ բողոք չի բերվում»:

Հոդված 19. Օրենսգրքի 308-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 308. Վճարման կարգադրություն արձակելու գործերի ենթակայությունը և ընդդատությունը

1. Վճարման կարգադրություն արձակելու գործը ենթակա է առաջին ատյանի դատարանին, եթե առկա չէ կողմերի միջև կնքված պայմանագիր, որով կողմերը որոշել են տվյալ պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:

2. Առաջին ատյանի դատարանին ենթակա վճարման կարգադրություն արձակելու գործը քննում է պարտապանի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարանը:»:

Հոդված 20. Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «309-րդ» բառը փոխարինել «311-րդ» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) կողմերի միջև կնքված պայմանագրով առկա է համաձայնություն պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում՝ վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:»:

Հոդված 21. Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների առկայության դեպքում՝ նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի պատճենը մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ:»:

Հոդված 22. Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարանը քննում է այն դեպքում, երբ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմումը չէր կարող ներկայացվել մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով սահմանված դեպքերում, և երբ արբիտրաժի վայր է հանդիսացել Հայաստանի Հանրապետության տարածքը:»:

Հոդված 23. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 51.1-րդ գլխով՝

«ԳԼՈՒԽ 51.1.

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱԿՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 345.1. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը

1. Նոտարի արձակած՝ կողմերի համար պարտադիր դարձած վճարման կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել դատական կարգով վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

2. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու մասին դիմումը կարող է ներկայացվել այն կողմերի համար պարտադիր դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է՝

1) պարտապանի հաշվառման (բնակության) վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանը ֆիզիկական անձ է.

2) պարտապանի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանն իրավաբանական անձ է:

Հոդված 345.2. Դիմումին ներկայացվող պահանջները

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը,

2) վճարման կարգադրության կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

3) վճարման կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը,

4) վճարման կարգադրությունը վիճարկելու հիմքերն ու հիմնավորումները,

5) վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը:

2. Վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կցվում են՝

1) վճարման կարգադրության օրինակը.

2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը.

3) դիմումը և դրան կից փաստաթղթերը մյուս կողմին և նոտարին ուղարկելը հավաստող փաստաթուղթը:

3. Դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 345.1-ին հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտմամբ:

Հոդված 345.3. Դիմումի քննությունը

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումն առաջին ատյանի դատարանը քննում է դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու:

2. Դատարանը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Դատական նիստի վայրի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են: Այդ դեպքում նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

3. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

4. Դատարանը կարող է վճարման կարգադրություն արձակած նոտարից պահանջել այն գործով նյութերը, որով կայացված որոշումը վիճարկվում է դատարանում:

5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Հոդված 345.4. Դատարանի որոշումը

1. Դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում՝ դիմումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և նոտարի արձակած վճարման կարգադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմումն ամբողջությամբ մերժելու մասին:

2. Դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները:

3. Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում:

4. Դատարանի որոշումը կողմերին է ուղարկվում ընդունման պահից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 24. Օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հեռակա և արագացված դատաքննության կիրառմամբ, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշման կամ վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում:»:

Հոդված 25. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 377-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երեք ամսվա» բառերը փոխարինել «վեց ամսվա» բառերով.

2) 2-րդ մասում «երկշաբաթյա ժամկետում» բառերը փոխարինել «տասնհինգօրյա ժամկետում» բառերով:

Հոդված 27. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վճռաբեկ բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու դեպքերի, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 28. Օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը հարուցված քաղաքացիական գործերով դատական ակտերի հրապարակման կարգի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կանոնը:»:

Հոդված 29. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետնուժի մեջ մտնելը, ինչպես նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած ակտերի դեմ բողոքները ներկայացվում են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

3. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ մտնելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ներկայացվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:

4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:

5. Սույն օրենքի 19-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 2-րդ կետը և 23-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկմանը հաջորդող օրվանից:

6. Սույն օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման պահից երկու ամիս հետո:

Երկրորդ ընթերցում
Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1
Լրամշակված նախագիծ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածում.

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում» բառերը փոխարինել «մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում» բառերով:

2) ~~լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2 մաս.~~ 2.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարան) պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և

ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված ակտերի դեմ բողոքների քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետ՝

«գ) սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասը «իրավասության» բառից հետո լրացնել «քաղաքացիական» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1. Դատարանը կարող է ապացույց պահանջելու մասին միջնորդությունը բավարարել առանց ապացույց պահանջելու մասին առանձին ակտի ձևով որոշման կայացման, եթե դատարանը պահանջվող տեղեկատվությունը կարող է ստանալ սույն օրենսգրքի 64.1-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդկությամբ նոր 64.1-րդ հոդվածով.

«**Հոդված 64.1. Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկություններ ձեռք բերելը**

1. Դատարանը միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով կարող է գործի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել այլ մարմիններից և անձանցից:

2. Դատարանին անհրաժեշտ տեղեկատվությունն էլեկտրոնային տեղեկատվական համակարգում ինքնաշխատ գեներացվում է հարցմամբ ներկայացված տեղեկությունների հիման վրա: Հարցման պատասխանն ինքնաշխատ պատրաստվում է էլեկտրոնային փաստաթղթի ձևով, որը հավաստվում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգի կողմից: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգից հարցման պատասխանի արտատպված օրինակը հավասարեցվում է տեղեկությունը տնօրինող համապատասխան մարմնից դիմումի կամ որոշման հիման վրա ստացված պատասխանին:»:

Հոդված 6. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասում «15-րդ օրն» բառերը փոխարինել «յոթերորդ օրն» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող և փաստաբան-ներկայացուցիչ չունեցող ֆիզիկական անձի, ինչպես նաև ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում գտնվող կամ բուժական հիմնարկում ստացիոնար բուժում ստացող գործին մասնակցող անձանց նկատմամբ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասում «15-րդ օրը» բառերը փոխարինել «յոթերորդ օրը» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 121-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) հայցվորի կամ հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «յոթնօրյա ժամկետում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի,» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով՝

«2. Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասին համապատասխան դատավորի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն հայցադիմումում առկա թերությունների մասին՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:»:

Հոդված 11. Օրենսգրքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում կամ նոտարի կողմից արձակած վճարման կարգադրություն, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը կամ նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելը մերժելու դեպքի.».

2) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 12. Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-1.~~3~~4-րդ մասերով.

«1.1. Այն դեպքերում, երբ չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները՝ այդ թվում հայցադիմումին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը կամ հայցադիմումը ստորագրված չէ՝ դատավորի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել հայցվորին հայցադիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում դատավորի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել հայցադիմումում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերությունները արձանագրությունը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ քան կազմման հաջորդ օրը ուղարկվում է հայցվորին:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր, որոնք թերությունների մատնանշման պահին չէին բացահայտվել դատավորի աշխատակազմի կողմից:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, եթե առկա են հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:

1.4. Սույն հոդվածի 1.1-րդ մասի կարգավորումը կիրառելի է այն դեպքերում, երբ առկա չեն սույն հոդվածի 1.1-րդ մասում չնշված հիմքերով հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:»:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Այն դեպքերում, երբ հայցադիմում առկա թերությունների վերացման համար հայցվորը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում՝ առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ այն հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով հայցվորին:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.

«2.1. Առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկում է հայցվորին: Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 13. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի կամքից անկախ, օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում վճռի հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել վճռի հրապարակման ժամանակը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:»:

Հոդված 14. Օրենսգրքի 297-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին մասում «երկուհազարապատիկը» բառերը փոխարինել «հինգհազարապատիկը» բառերով:

2) 3-րդ մասի 3-րդ կետում «երկուհազարապատիկը» բառը փոխարինել «հինգահազարապատիկը» բառով:

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան.»։~~.~~

~~4) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«Գործի չի կարող քննվել պարզեցված վարույթի կարգով, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով գործի քննությունը դադարեցվում է, եթե՝»։~~

Հոդված 15. Օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ: Սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատարանը պարզեցված վարույթ կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ, իսկ 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ հայցադիմումի պատասխանն ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում՝ առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ:»:

Հոդված 16. Օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Առաջին ատյանի դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում եզրափակիչ դատական ակտը կայացնում և հրապարակում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից չորս ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով պարզեցված վարույթ կիրառելու դեպքերի, որի պարագայում եզրափակիչ դատական ակտը կայացվում և հրապարակվում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:»:

Հոդված 17. Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ներկայացվել է ամուսնալուծության և (կամ) ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8) հայցն ակնհայտ անհիմն է~~ կամ ոչ իրավաչափ~~:»:

Հոդված 18. Օրենսգրքի 305-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «15-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «մեկամսյա ժամկետում» բառերով.

2) հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արագացված դատաքննության կիրառմամբ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու օրվանից 15-օրյա ժամկետում, եթե դրա դեմ նույն ժամկետում վերաքննիչ բողոք չի բերվում»:

Հոդված 19. Օրենսգրքի 308-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 308. Վճարման կարգադրություն արձակելու գործերի ենթակայությունը և ընդդատությունը

1. Վճարման կարգադրություն արձակելու գործը ենթակա է առաջին ատյանի դատարանին, եթե առկա չէ կողմերի միջև կնքված պայմանագիր, որով կողմերը որոշել են տվյալ պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:

2. Առաջին ատյանի դատարանին ենթակա վճարման կարգադրություն արձակելու գործը քննում է պարտապանի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարանը:»:

Հոդված 20. Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «309-րդ» բառը փոխարինել «311-րդ» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) կողմերի միջև կնքված պայմանագրով առկա է համաձայնություն պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում՝ վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:»:

Հոդված 21. Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների առկայության դեպքում՝ նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի պատճենը մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ:»:

Հոդված 22. Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարանը քննում է այն դեպքում, երբ արբիտրաժի

վճռի հարկադիր կատարման համար դիմումը չէր կարող ներկայացվել մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով սահմանված դեպքերում, և երբ արբիտրաժի վայր է հանդիսացել Հայաստանի Հանրապետության տարածքը:»:

Հոդված 23. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~լրացնել~~ 51.1-րդ գլխով՝

«ԳԼՈՒԽ 51.1.

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱԿՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 345.1. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը

1. Նոտարի արձակած՝ կողմերի համար պարտադիր դարձած վճարման կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել դատական կարգով վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

2. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու մասին դիմումը կարող է ներկայացվել այն կողմերի համար պարտադիր դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է՝

1) պարտապանի հաշվառման (բնակության) վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանը ֆիզիկական անձ է.

2) պարտապանի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանն իրավաբանական անձ է:

Հոդված 345.2. Դիմումին ներկայացվող պահանջները

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը,

2) վճարման կարգադրության կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

3) վճարման կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը,

4) վճարման կարգադրությունը վիճարկելու հիմքերն ու հիմնավորումները,

5) վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը:

2. Վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կցվում են՝

1) վճարման կարգադրության օրինակը.

2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը.

3) դիմումը և դրան կից փաստաթղթերը մյուս կողմին և նոտարին ուղարկելը հավաստող փաստաթուղթը:

3. Դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 345.1-ին հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտմամբ:

Հոդված 345.3. Դիմումի քննությունը

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումն առաջին ատյանի դատարանը քննում է դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու:

2. ~~Դատարանը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար~~

~~նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցվում են կողմերը:~~ Դատարանը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Դատական նիստի վայրի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են: Այդ դեպքում նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

3. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

4. Դատարանը կարող է վճարման կարգադրություն արձակած նոտարից պահանջել այն գործով նյութերը, որով կայացված որոշումը վիճարկվում է դատարանում:

5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Հոդված 345.4. Դատարանի որոշումը

1. Դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում՝ դիմումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և նոտարի արձակած վճարման կարգադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմումն ամբողջությամբ մերժելու մասին:

2. Դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները:

3. Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում:

4. Դատարանի որոշումը կողմերին է ուղարկվում ընդունման պահից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 24. Օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հեռակա և արագացված դատաքննության կիրառմամբ, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշման կամ վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում:»:

Հոդված 25. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ

միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 377-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երեք ամսվա» բառերը փոխարինել «վեց ամսվա» բառերով.

2) 2-րդ մասում «երկշաբաթյա ժամկետում» բառերը փոխարինել «տասնհինգօրյա ժամկետում» բառերով:

Հոդված 27. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վճռաբեկ բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու դեպքերի, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում

է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 28. Օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը հարուցված քաղաքացիական գործերով դատական ակտերի հրապարակման կարգի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կանոնը:»:

Հոդված 29~~3~~. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետնուժի մեջ մտնելը, ինչպես նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած ակտերի դեմ բողոքները ներկայացվում են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

3. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետն__ուժի մեջ մտնելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ներկայացվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:

4. ~~Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության~~

~~դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:~~ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:

5. Սույն օրենքի 19-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 2-րդ կետը և 23-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկմանը հաջորդող օրվանից:

6. Սույն օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման պահից երկու ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԴԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագծի հոդված 23**	Առաջարկվում է Նախագծի 23-րդ հոդվածով լրացվող 110.1-րդ հոդվածի վերտառությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելը և դատավորների թեկնածուների ցուցակում հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին ընդգրկելը»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 25, 1-ին կետ**	Առաջարկվում է Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը փոփոխել և այդ հոդվածով փոփոխվող «Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է	Ընդունվել է

			դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածը 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 կետով. «չորրորդ հերթին՝ սույն օրենսգրքի 110.1-րդ հոդվածով նախատեսված հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին՝ ըստ հատուկ կարգով որակավորման ստուգումը հանձնելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող անձին.»: Ըստ այդմ, Նախագծի նույն՝ 25-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել «գ» ենթակետով և «դ» ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «գ. 4-րդ կետում «չորրորդ» բառը փոխարինել «հինգերորդ» բառով. դ. 5-րդ կետում «հինգերորդ» բառը փոխարինել «վեցերորդ» բառով.». Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին կետի սկզբնական տարբերակի «բ» ենթակետը նախատեսել, որպես «ե» կետ՝ նույն տեղում «վեցերորդ» բառը փոխարինելով «յոթերորդ» բառով:		
3.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 27**	Առաջարկվում է Նախագծի 27-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի լրացվող 117-րդ հոդվածի 7-րդ մասում «թեկնածուների» բառից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			լրացնել «, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների» բառերը:		
4.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 36, 8-րդ մաս**	Առաջարկվում է Նախագծի 36-րդ հոդվածի 8-րդ մասում «իսկ իրենց վարույթում» բառերից հետո լրացնել «մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների վարույթների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ու բողոքների վերաբերյալ» բառերը «ավարտելուց հետո համապատասխան դատավորները ձեռք են բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ» բառերը փոխարինել «սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում չավարտելու դեպքում ենթակա են վերաբաշխման մեկշաբաթյա ժամկետում, որից հետո համապատասխան դատավորները ձեռք են բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 36, 10-րդ մաս**	Առաջարկվում է Նախագծի 36-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին նախադասությունում «և» բառը փոխարինել «կամ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ**	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում լրացվող 2.2-րդ մասը նախատեսել գործող հոդվածի 2.1-ին մասում՝ այն շարադրելով հետևյալ կերպ. «2.1. Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» (*Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագիծ, հոդված 1, 2-րդ կետ	Հանրապետության հակակոռուպցիոն դատարանում (այսուհետ՝ հակակոռուպցիոն դատարան) պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննության, ինչպես նաև մինչև գործի հարուցումն առանձին դատավարական գործողությունների կատարման, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված ակտերի դեմ բողոքների քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով:»:		
7.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 12**	Առաջարկվում է Նախագիծ 2-ի 12-րդ հոդվածի 1-ին կետով փոփոխվող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասում «այլ հիմքեր» բառերից հետո լրացնել «, որոնք թերությունների մատնանշման պահին չէին բացահայտվել դատավորի աշխատակազմի կողմից» բառերը, ինչպես նաև նույն հոդվածը լրացնել 1.4.-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.4. Սույն հոդվածի 1.1-րդ մասի կարգավորումը կիրառելի է այն դեպքերում, երբ առկա չեն սույն հոդվածի 1.1-րդ մասում չնշված հիմքերով հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:»:	Ընդունվել է	Ընդունվել է

8.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 14, 4-րդ կետ**	Առաջարկվում է Նախագծի հոդված 14-ի 4-րդ կետը, որով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվում է այլ խմբագրությամբ, Նախագիծ 2-ից հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 17, 2-րդ մաս**	Առաջարկվում է Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ կետով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի լրացվող 8-րդ կետից կանել «կամ ոչ իրավաչափ» բառերը»:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 23**	Առաջարկվել է Նախագծի հոդված 23-ով լրացվող 345.3-րդ հոդվածում կարգավորել նաև նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննելու և դրա վերաբերյալ որոշում է կայացնելու երկամսյա ժամկետ, երբ դիմումի քննության համար նշանակվում է դատական նիստ:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 29, 4-րդ մաս**	Նախագծի «Եզրակակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 29-րդ հոդվածի 4-րդ մասը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:»:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	**Պատգամավոր**	**«Հայաստանի**	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին	Ընդունվել է	Ընդունվել է

	Արփինե Դավոյան	**Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (*Կ-452²-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագիծ, 6-րդ հոդված**	մասն առաջարկվում է խմբագրել՝ 260-րդ հոդվածի 1-ին մասի «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին» բառերը փոխարինելով «Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)» բառերով՝ այլ հոդվածներում նույն փոփոխությունը կատարելուց զերծ մնալու նպատակով:		
13.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452²-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, 10-րդ հոդված**	Հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0097/01/09 և ԼԴ/0019/01/14 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնց բովանդակությունը, ի թիվս այլնի, հանգում է նրան, որ արագացված վարույթ կիրառելու դեմ հանրային մեղադրողի կամ տուժողի կողմից ներկայացված առարկությունը պետք է լինի փաստարկված, իսկ վերջիններս պետք է դատաքննության ընթացքում ունենան հնարավորություն ներկայացնելու նշված վարույթի կիրառման վերաբերյալ իրենց դիրքորոշումը՝ առաջարկվում է Նախագծի 10-րդ հոդվածով լրացվող 55.1-ին գլխում՝ ա) 464.1-ին հոդվածի 4-րդ կետը	Ընդունվել է	Ընդունվել է

			շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ «4) արագացված վարույթ կիրառելու դեմ փաստարկված առարկում է հանրային մեղադրողը կամ տուժողը.», իսկ 5-րդ կետը հանել, քանի որ նախորդ կետն արդեն իսկ իր մեջ ներառում է քննարկվող հարցի առնչվող կարգավորող դրույթներ, բ) 464.2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն՝ «Դատարանը միջոցներ է ձեռնարկում արագացված վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ տուժողի կարծիքը պարզելու համար», գ) Հաշվի առնելով, որ արագացված վարույթով լրացուցիչ դատալսումների ընթացքում դատարանը, մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող, նրա անձը բնութագրող հանգամանքներից և պատժի վերաբերյալ հարցերից բացի պետք է քննարկման առարկա դարձնի նաև այլ հարցեր (գույքի արգելադրման, ապացույցների պահպանման և տնօրինման, խափանման միջոցի կիրառման և այլնի հետ կապված)՝ առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 55.1-ին գլխի 464.3-րդ հոդվածի 1-ին մասում «մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը		

			մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև նրա անձը բնութագրող հանգամանքների և պատժի վերաբերյալ» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի 2-9-րդ կետերով և 11-րդ կետով նշված» բառերով, դ) Նկատի ունենալով, որ գույքային հայցի լուծման հետ կապված հարցերը հանդիսանում են քրեական դատավարության ընթացքում արդարադատության տնտեսման յուրօրինակ միջոց, ինչպես նաև այն, որ գույքային հայցի ներկայացումը և այն ընդունելու կամ դրա դեմ առարկություն ներկայացնելու հետ կապված հարցը հանդիսանում է վարույթի մասնավոր մասնակիցների տնօրինչական իրավունքը՝ առաջարկվում է դատարանին արագացված վարույթի ընթացքում վերապահել նաև գույքային հայցի քննության իրավասությունը: Հետևաբար առաջարկվում է Նախագիծ 3-ի 10-րդ հոդվածով լրացվող 55.1-ին գլխի 464.4-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը հանել:		
14.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[2]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, 11-րդ հոդված**	ա) Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում առաջարկվում է հղումները համապատասխանեցնել Նախագծի հոդվածների համարներին, «հանցագործությունների» բառերը փոխարինել «հանցանքների» բառերով, իսկ «գործերով» բառերից հետո	Ընդունվել է	Ընդունվել է

			լրացնել «(վարույթներով)» բառերը: բ) նույն հոդվածի 4-րդ մասը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում վարույթը նոր քննության փոխանցելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության փոխանցում է հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:»:		
15.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[2]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1, վերնագիր**	Առաջարկվում է Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**«Հայաստանի Հանրապետության սնանկության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (*Կ-452[5]-16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագծի հոդված 6**	Առաջարկվում է Նախագիծ 4-ի 6-րդ հոդվածը լրացնել 1-ին կետով, որով առաջարկվում է «Սնանկության մասին» օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասում «օրինակին» բառից հետո լրացնել «, որից հետո վերջնական հաշվեկշիռը և հաշվետվությունը ներկայացնում է դատարան» բառերով»: Կատարված փոփոխության արդյունքում Նախագծում 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը փոփոխվել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ կետերով:	Ընդունվել է	Ընդունվել է
17.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[5]-16.12.2022-ՊԻ-011/1,**	Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով փոփոխվող	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված 8, 1-ին կետ	«Սնանկության մասին» օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում «որոշում» բառից հետո լրացնել «՝ պահանջը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում» բառերը:		
18.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[5]-16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 9**	Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել 1-ին կետով՝ «Սնանկության մասին» օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասում «օրինակին» բառից հետո լրացնելով «, որից հետո վերջնական հաշվետվությունը ներկայացնում է դատարան» բառերով»: Կատարված փոփոխության արդյունքում Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը փոփոխվել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ կետերով:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-452[8]-16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագծի հոդված 6**	Առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածը լրացնել 2-րդ կետով, որով Վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը կլրացվի հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով. «1.1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը՝	Ընդունվել է	Ընդունվել է

			անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով:»:		
20.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[8]-16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 7**	Առաջարկվել է Նախագծի հոդված 7-ով Վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող նախադասության մեջ «118.2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «117-րդ հոդվածի 1.1-րդ մասով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[8]-16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 9, 2-րդ կետ**	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
22.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[8]-16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 10, 1-ին կետ**	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին կետում «118.2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «117-րդ հոդվածի 1.1-րդ մասով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
23.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[8]-16.12.2022-ՊԻ-011/1, հոդված 14**	Առաջարկվում է Նախագծի հոդված 14-ի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«Հոդված 14. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ». նույն հոդվածում լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարչական վերաքննիչ դատարան ներկայացված սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործերով վերաքննիչ բողոքների քննությունն կարող է իրականացվել վերաքննիչ բողոքի քննության՝ գրավոր ընթացակարգով:»:		
24.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1** **Նախագիծ Կ-452[1]-02.12.2022,16.12.2022-ՊԻ-011/1**	Նախագծերում կատարվել են տեխնիկական բնույթի շտկումներ՝ տե՛ս կից տեղեկանքը:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (*Կ-452[6]-16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագիծ, հոդված 1**	Հարկ է նկատել, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ4/0031/01/16 որոշման շրջանակներում անդրադառնալով ռեցիդիվի և արագացված դատաքննության կանոնների միաժամանակյա կիրառության հարցին արձանագրել է, որ «(…) [Հ]անցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև մրցակցություն կամ հակասություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ	Ընդունվել է	Ընդունվել է

			ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նկատմամբ ռեցիդիվի կանոնների կիրառման արդյունքում ստացված պատժի նվազագույն սահմանը մեծ է արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառման արդյունքում ստացված պատժի առավելագույն սահմանից, կամ հավասար է դրան: Բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան կանոնների կիրառման արդյունքում ձևավորված պատժի նվազագույն սահմանը փոքր է առավելագույն սահմանից՝ նման հակասության մասին խոսք չի կարող լինել, քանի որ առաջանում է հարաբերական որոշակի սանկցիա՝ ապահովելով պատժի անհատականացման սկզբունքի իրացման հնարավորությունը:»: Վերոնշյալ իրավական դիրքորոշումով պայմանավորված՝ առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով խմբագրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 5-րդ մասը, այն է՝ «կիրառելի չեն» բառերից հետո լրացնել «, բացառությամբ արագացված վարույթ կիրառելու դեպքում պատիժ նշանակելիս» բառերը: Բացի այդ, առաջարկվում է նույն հոդվածը լրացնել 5.1-ին մասով՝ հետևյալ		

			բովանդակությամբ. «5.1. Սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ռեցիդիվի պայմաններում արագացված վարույթ կիրառելու դեպքում սույն հոդվածի 4.1-ին մասով նախատեսված կանոնները կիրառվում են սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պատժի նշանակման կանոնները կիրառելուց հետո:»:		
26.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»** **(*Կ-452[7]-16.12.2022-ՊԻ-011/1*) օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 7), 3-րդ հոդված**	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող լրացման փոխարեն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասում «պատժի կրման վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը» բառերը փոխարինել «համապատասխանաբար մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը՝ ըստ պատժի կրման վայրի» բառերով՝ կարգավորումների ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու նպատակով	Ընդունվել է	Ընդունվել է
27.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[7]-16.12.2022-ՊԻ-011/1, 4-րդ հոդված**	ա) Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված բողոքարկման ժամկետները համապատասխանեցնել	Ընդունվել է	Ընդունվել է

			ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 392-րդ և 395-րդ հոդվածներով սահմանված բողոքարկման ժամկետներին, քանի որ հիշյալ բողոքների նկատմամբ վերաբերելի մասով տարածվելու է դատական ակտերի հատուկ վերանայման դատավարական ընթացակարգը: Նշվածով պայմանավորված՝ ՀՀ քեակատարողական օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասում «մեկամսյա» բառը անհրաժեշտ է փոխարինել «տասնօրյա» բառով, իսկ 3-րդ մասում «մեկամսյա» բառը՝ «տասնհինգօրյա» բառով: բ) Միևնույն ժամանակ, հատուկ վերանայման պարտադիր բանավոր ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է, իսկ գրավոր կամ բանավոր ընթացակարգ կիրառելու հարցի լուծումը պետք է թողնել դատարանի հայեցողությանը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների տրամաբանությամբ (օրինակ՝ կալանքի հարցի վերաբերյալ առաջին ատյանի կայացրած դատական ակտերի դատական վերանայման դեպքում հատուկ վերանայման պարտադիր բանավոր ընթացակարգ նախատեսված չէ, և		

			գրավոր կամ բանավոր ընթացակարգ կիրառելու հարցի լուծումը թողնված է դատարանի հայեցողությանը): Ըստ այդմ, առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով օրենսգրքի 165-րդ հոդվածի 5-րդ մասի նոր խմբագրության մեջ ներառվող՝ «Սույն օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված դատական ակտերի հատուկ վերանայման վարույթն իրականացվում է միայն բանավոր ընթացակարգով» նախադասությունը հանել:		
28.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[7]-16.12.2022-ՊԻ-011/1, 5-րդ հոդված**	Հաշվի առնելով, որ կատարված հանցանքների և դրանց համար նշանակված պատիժների նոր օրենքին համապատասխանեցման գործընթացը, ըստ էության, հանդիսանում է դատավճռի շարունակությունն ու դրա անբաժանելի մասը՝ նպատակահարմար է այս վարույթի ընթացքում կայացված դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու հնարավորություն նախատեսել նաև տուժողի, վերջինիս օրինական ներկայացուցչի և փաստաբանի համար: Ըստ այդմ՝ առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող նոր՝ 168.1.-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «փաստաբանը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև տուժողը, տուժողի օրինական ներկայացուցիչը և	Ընդունվել է	Ընդունվել է

			փաստաբանը» բառերը:		
29.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[7]-16.12.2022-ՊԻ-011/1**	Առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասում «վեցամսյա» բառը փոխարինելով «իննամսյա» բառով՝ պատշաճ կերպով մեծածավալ կարգավորումները նախատեսելու և դրանց իրավակիրառների կողմից ծանոթանալու հնարավորությունն ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
30.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**Նախագիծ Կ-452[7]-16.12.2022-ՊԻ-011/1, 6-րդ հոդված**	Առաջարկվում է Նախագծի 6-րդ (նոր հոդվածի լրացման դեպքում՝ 7-րդ) հոդվածում «տասներորդ» բառը հանել, հոդվածի վերնագիր սահմանել՝ «**Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**»՝ լրացնելով հոդվածը հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված բողոքարկման կանոնները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացված դատական ակտերի վրա:»:	Ընդունվել է	Ընդունվել է
31.	**Պատգամավոր Արփինե Դավոյան**	**««Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (կ-452[14]-**	Նախագծով «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում կատարել նոր լրացում դրա 19-րդ հոդվածի 4-րդ մասում «դատական դեպարտամենտի ղեկավարը» բառերը փոխարինել «Բարձրագույն դատական խորհրդի նախագահը» բառերով, ինչը. պայմանավորված է Նախագիծ 1-ի 16-	Ընդունվել է	Ընդունվել է

		16.12.2022-պի-011/1) **օրենքի նախագիծ**	րդ հոդվածում կատարվող փոփոխություններով:		